

124 Եւ ես վասն զի տկարամիտ եւ անզգուշացող այր եմ յերկրաւոր միտս՝ ոչ զգացի ժամոյն¹ դաւոյն. այլ պարտ էր փութով եւ² երագ երագ անկանել ի յոտսդ³ արտասուաւք եւ աղաչելով, եւ ի բաց փախչել ի հոգաբարձութենէ տեղւոյդ: 125 Եւ ահա լինէի պրծեալ ի չարաթոյն ժանեաց գազանացն, որք յայնմ հետէ դարանամտեալք ի ծածուկ, եւ ըստ անհամար մեծութեան իւրեանց սաստիկ կարասաւ գնեալ բազում յեսան՝ «սրեցին որպէս սուսեր զլեզուս իւրեանց, եւ թոյնք իժից էին ի ներքոյ շրթանց»: 126 Եւ իմ ոչ մարթացեալ⁴ աղաւթել իբրեւ զսաղմոսերզն, թէ *Պահեա՛, Տէր, ի ձեռաց մեղաւորի, եւ ի մարդոյ չարէ փրկեա՛ զիս*^ա. ⁵որոց հետամտեալ այնուհետեւ խափանեցին զգնացս իմ, եւ հասեալ խոցոտեցին զիս ի մահ: 127 Այլ խնդամ ցնծացեալ, զի այն վիրաւք եւ որ յառաջագոյն խոցոտեալ իմ հոգիս մեղաւք՝ առողջացեալ զաւրացաւ:

128 Եւ այսպէս վճարեալ զամենայն կամաց խնդիր ի վերայ իմ՝ այնուհետեւ ուրախ լինէին որպէս ի կատարելում տանի զուարճացեալք: 129 Որոց պարտն էր լալ զիս իբրեւ զանցուցեալ, նստեալ շուրջ զինեւ ի սենեկի⁶, եւ արտասուել պատել⁷ իբրեւ զվիրաւոր եւ դեղ դնել. այլ զսոցունց հատուցին զհակառակն. այսպէս առնելով պատեցին շուրջ զինեւ, ի սիրտս իւրեանց խնդալիցք. *Բացին ի վերայ իմ զքերանս իւրեանց եւ ասացին. վա՛շ, վա՛շ, տեսին աչք մերք*: 130 Եւ զի ոչ լոյ բանից ընդվայրախաւսութիւն է զոր ասեմս, այլ ճշմարտապէս արդիւնաւոր փորձիւ՝ յանդիման կացուցանեմ տեառնդ զբանս:

131 Չերեւելի սեպուհ մի յականաւոր տոհմէ առաքեցի առ զխաւորդ Հայոց քահանայութեան, առ հիւանդատեսդ⁸ հոգւոց, ասեմ. «Առ ի բժշկութիւն վիրաւորաց փութա՛, հա՛ս յաւգնել. խոցոտեցայ ի թշնամոյն անթիւ նետիւք. կարեւր⁹ եմ մերձ ի մահ. քեզ է այսուհետեւ հարկ՝ դնել դեղ եւ բժշկել. կամ թէ մեռանել՝ տանել ի շիրիմ եւ թաղել»: 132 Եւ նորա¹⁰ պատասխանի արա-

1 Վ. առ ժամոյ

2 Վ. չիք փութով եւ

3 ՏՏ. յոտսդ

4 ՉՎԱտ. եւ իմոյ չմարթացեալ. այսպէս ըստ ԲԳտ.

ա Սաղմ. ՃԼԹ 5

5 Վ. չիք որոց հետամտեալ այնուհետեւ... վաշ վաշ տեսին աչք մեր (Թուղթ, 129)

6 Չ. ի սինեկի

7 ՏՏ. չիք պատել

Բ Սաղմ. ԼԴ 21

8 Վ. հիւանդատեսդ

9 Չ. կարեւր

10 ԲԳտ. եւ նա